«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիր»

Համաձայնագրի իրականացման արդյունքում ստացված օգուտը հակամարտությունների, խաղաղության և կայունության ոլորտում

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրով» արտահայտված է լիիրավ հարգանք անկախության, ինքնիշխանության, Վրաստանի տարածքային ամբողջության և միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության սկզբունքների նկատմամբ, նաև նշված է Եվրամիության պարտականությունը՝ աջակցել հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին: Դրա հետ միասին նշված է կողմերի պարտականությունը՝ տարածել Վրաստանի և Եվրամիության սերտ քաղաքական ասոցացման, նաև Վրաստանի և Եվրամիության բոլոր քաղաքացիների տնտեսական ինտեգրման օգուտը, ներառյալ հակամարտության հետևանքով մասնատված հասարակությունը: Համաձայնության մեջ կողմերը մեկ անգամ ևս նշում են իրենց պարտականությունները հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորման տեսանկյունից, Վրաստանի ինքնիշխանության և միջազգայնորեն ճանաչված սահմանների տարածքային ամբողջության անխախտելիության լիիրավ հարգանքով:

Փաստաթղթում հատուկ ուշադրություն է դարձվում հակամարտության հետագա վերականգնմանը և համատեղ աջակցմանը հաշտությանն ուղղված ջանքերին: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հակամարտության խաղաղ կարգավորումը կլինի ինչպես կողմերի միջև, այնպես էլ այլ միջազգային ակտորների քաղաքական երկխոսության անցկացման գլխավոր թեմաներից մեկը.

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» կողմերը ընդունում են 2008 թվականի օգոստոսի 12-ի կրակի դադարեցման վեց կետից բաղկացած

համաձայնագրի լրիվ իրականացումը և նրա հետագա իրականացման միջոցառումները՝ համապատասխան ճանաչման քաղաքականությանը, որը իրականացվել է ներգրավման քաղաքականության միասնական ջանքերով, Ժնևյան միջազգային բանակցությունների և միջազգային իրավունքի սկզբունքներով, բոլոր ստիպողաբար տեղահանված անձանց և փախստականների անվտանգ և արժանի վերադարձով իրենց ապրելատեղը և տեղում գործող միջազգային ներգրավմանը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, ԵՄ ներգրավման նշանակությունը:

ԵՄ պարզաբանմամբ, Վրաստանում ԵՄ մոնիտորինգի առաքելության տեղադրումը որոշելու հիմք հանդիսացան հենց համաձայնագրի սեպտեմբերի 8-ին իրականացվող միջոցառումները 2008 թվականի օգոստոսի 12-ի կրակը դադարեցնելու մասին:

Նշվածից բացի, կողմերը կնպաստեն աստիճանական մերձեցմանը արտաքին քաղաքականության ոլորտում և անվտանգության ոլորտում, ներառած միասնական անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը: Կողմերը հայտարարում են, որ իրենց տարածքում արտասահմանյան պետության զինված ուժերի տեղադրումը պետք է տեղի ունենա միայն տանուտեր-երկրների պարզ համաձայնությամբ՝ միջազգային իրավական նորմերին համապատասխան:

Ավելին, կողմերը կուժեղացնեն պրակտիկ համագործակցումը հակամարտության կանխարգելման և ճգնաժամի տեսանկյունից, հատկապես ԵՄ պետական և ռազմական ճգնաժամի կառավարման օպերացիաներում, ինչպես նաև հաշվի առնելով Վրաստանի հնարավոր մասնակցությունը համապատասխան ուսուցմանը և վարժություններին:

Հրատարակությունը պատրաստված է Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի կողմից» Ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ (NationalEndowmentforDemocracy), «Աջակցում խիտ բնակեցված տարածաշրջաններում ազգային փոքրամասնությունների քաղաքացիական հասարակության զարգացմանը» նախագծի շրջանակներում: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»: «Բազմազգ Վրաստանի» հայացքները կարող են չհամընկնել ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի կարծիքին: